

ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏՍՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կես տարվանը 6 րուբլ:

Առանձին նամակները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միայն այն նամակները, որոնք ունենում են հետևյալ հասցեն:

«Մատուցողություն» գրասենյակի հասցեն: Տիֆլիս, Քեդաքիա «Մուսախ»

Խմբագրատանը բաց է առաջօրյան 10—2 ժամ

(Բացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարությունները կարող են տպվել անվճար:

Յայտարարությունների համար գնում են խրատային րուբլեր 2 կոպեկով:

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ

Ներսէս պատրիարքի հրատարակածը.— Ներսէս ՏԵՍՈՒԹԻՒՆ, ժողովրդական լուսաւորութեան միջնորդ Բարսեղ Նիկողոսի Թիֆլիսի մէջ: Նամակ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՍՅԱՆԻ—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Աւստրո-Ունգարիա: Ֆրանսիա: Նամակ ԹԻՔԵՐՅԱՆԻ—ԼԵՆԻՆԻՆՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, Նամակ ԹԻՔԵՐՅԱՆԻ:

ՆԵՐՍԷՍ ՊԱՏՐԻԱՐԿԻ ՀՐԱՏԱՐԱԿԱՆԸ

Եթէ հաւատանք մեր Կ. Պոլսի թղթակցին, Ներսէս սրբազանի հրատարականի պատճառը այն անտանելի բարոյական դուրսերն են, որի մէջ զրկել են նրան Կ. Պոլսի էֆէնդիները, նրանց անհազ շահասիրութիւնը և անվերջանալի խտրութիւնը...

Ուրեմն իսկ այն ժամանակ, երբ պէտք է վճարուի հայոց խնդիրը, այն մարդիկ որոնք ազգի գոյութեան սիւնն են համարում իրանց, ամեն բան քանդում են, ձգտելով միմիայն իրանց նեղ սննդական շահերին: Նրանց խելքով ազգասէր լինել նշանակում է պաշտպան հանդիսանալ թիւրքաց շահերի, ազգագուռ գործ կատարել նշանակում է բռնել Բ. Կրան շահերի կողմը, իսկ ազգասէր գործ նրանք անուանում են հայոց ազգին օգտակար, բայց իրանց գրգռանքի քանակար գործը:

Ազգը նրանց կարծիքով իրանց սեփական գրգռան է, ազգաշէն գործ կատարել նշանակում է կառուցանել մի որ և է մըգլիկ կամ պալատ սուլթանի կամ նրա հարկի համար, ազգի պարծանքն այն է, երբ մի Արրահամ փաշայի, Սարգիս բէյի կամ

Յարութիւն էֆէնդիի կուրծքը զարգարվում է թիւրքաց պատանշաններով:

Բայց այն երեւոյթը որ 200,000 հայեր, հեռու իրանց հայրենիքից, սպառում են իրանց ոյժերը Կ. Պոլսի մէջ, գրկելով շայտատանը ազգարնակութեան աճելուց,— գա ազգապաշտան երեւոյթ չէ շահապաշտ էֆէնդիների կարծիքով:

Ինչպէս երևում է Կ. Պոլսի հարուստները սարսափեցան տեսնելով որ ճշմարիտ այսօր կամ վաղը պէտք է վճարուի հայոց խնդիրը, ուրեմն ծանրութեան կէտը իրանց ձեռքերից անցնելու է ժողովրդի ձեռքը, Կ. Պոլսից անցնելու է շայտատանը: Նրանք այսպիսով կորցնելու են ամեն բան: Աւելի լաւ է շայտատանը կորչի, քան թէ մենք, մտածում են նրանք: Եւ որովհետեւ Ներսէսը գլխաւոր և անխնջ գործող է թիւրքաց շայտատանի ինքնավարութեան գաղափարի համար,— նրան նախ և առաջ աշխատեցին վայր զցել, տեսնելով որ հայոց խնդիրը մտանում է իր վերջնական լուծման:

Երբ որ մենք «Մշակի» մէջ անդադար ասում էինք թէ Կ. Պոլսի ազգային ժողովը և նոյն իսկ Ներսէս պէտք է տեղափոխվեն Կ. Պոլսից շայտատան,— մեզ ծաղրում էին: Այժմ երեւի տեսնում են որ մեր մտքը ուղիղ էր: Ներսէսը մնալով Կ. Պոլսի մէջ, նրա ոյժերը անդամայոյժ են լինում նրան շրջապատող խարդախ շրջանի մէջ: Եթէ ազգային ժողովը լինէր վանի կամ էրզրումի մէջ, նա կազատվէր զանազան Դադեաններին, Արրահամ փաշաներին, Բալեաններին և նրանց նամակներին խարդախ և շահասէր ազգեցութիւնից: Եւ եթէ մինչև անգամ

Ներսէս մնար էլ Կ. Պոլսում, բայց ազգային ժողովը զանվէր շայտատանում, պատրիարքը անխախ կը լինէր Կ. Պոլսի շահամուր հայ փաշաների ներգործութիւնից և իր գործունէութեան, իր ոյժի յինտիկտը կունենար շայտատանի որ և է վերտործի մէջ, որտեղ կը գտնվէր ազգային ժողովը:

Կ. Ա.

ՆԵՐՍԷՍ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱՆՈՐՈՒԹԵԱՆ ՄԻՆԻՍՏՐ ԲԱՐՏՆ Ա. Պ. ՆԻԿՈՒՍԻ ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ

Այս վերնագրով «Кавказский Курьер» լրագրի մէջ տպւած է հետեւեալ յօդուածը: Յունիսի 25-ից Թիֆլիսի հիւր է ժողովրդական լուսաւորութեան միջնորդ Բարսեղ Ա. Պ. Նիկողոսի: Նրա ներկայութիւնը մեր քաղաքի մէջ, որ կովկասի հետ միասին նրա համար գրեթէ մայրենի է, պէտք է օգտակար ազդեցութիւն գործէ մեր երկրի ժողովրդական լուսաւորութեան գործի վրա: Բարսեղ Ալեքսանդր Պավլովիչ կովկասի պետական գլխաւոր գործիչներից մէկն էր և նախկին թագաւորութեան մեծ վերանորոգութիւնները, որոնք ամբողջապէս կամ մասամբ իրագործված են մեր երկրի մէջ, կատարվել են այն ժամանակ, երբ բարսեղ Նիկողոսի կովկասեան գլխաւոր կառավարութեան կառավարիչն էր: Ով իմանում է, թէ ինչպիսի հեղինակութիւն ունէր բարսեղ այդ պաշտօնը կատարելու ժամանակ, նա

կը հասկանայ, թէ այժմեան միջնորդը ինչպիսի դեր է կատարել մեր երկրի պետական և քաղաքային կազմակերպութեան գործի մէջ:

Նա շատ բան է արել մեր երկրի համար և աւելի շատ կարող է անել այժմ, շատացնելով միջնակարգ ուսումնարանների թիւը, որոնց կարօտ է մեր երկիրը: Օգտվելով նրա ներկայութիւնից, Թիֆլիսը պէտք է խնդրէ նրանից կովկասեան համալսարանի հիմնելու մասին, որի բացակայութիւնը մեր երկրում խանգարում է բարձր ուսում ստանալու գործին: Պ. միջնորդը, որ լաւ ծանօթ է մեր երկրի զանազան ազգութիւնների հետ, երեւի կը համակրէ նրանց հոգեւոր միութեանը լուսաւորութեան բարձր ազդեցութիւն օգնութեամբ, որ պայմանաւորված կը լինի յարգանքով դէպի կովկասեան ժողովրդների լեզուները, որոնք նրանց ամենախնդրալի սեփականութիւն են կազմում: Կովկասեան համալսարանի հակառակորդներին ներմադրութիւնները չափազանց աննշան են, որ անկարելի լինի Թիֆլիսում հիմնել կովկասեան համալսարան: Այդպիսի միակ պատճառը միջնակարգ ուսումնարանների պակասութիւնն է կովկասի մէջ, հետեւապէս և ուսանողների պակասութիւնը: Կոչւում են համալսարանի համար: Բայց մի՞թէ կովկասեան համալսարանը բաց առ ապէս կ'օգտակարի մեր հիմն վրէ, ինչպէս իրաւացի նկատում է «Մշակ»: Մի՞թէ Մոսկովայի համալսարանը միայն Մոսկովայի նահանգի համար է հիմնված, Պետերբուրգը Պետերբուրգի համար, Կիւմովը Կիւմովի համար,

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՆ

Կ. Պոլսի, 26 յունիս 81

Այս շաբաթ ընդ որ ուշադրութիւններն գրաւող խնդիրը Անգղիոյ խորհրդարանին մէջ յունիս 24-ին տեղի ունեցած վիճաբանութիւններն էին: Թայմզի յունիս 25-ի թիւը ձեռք է ձեռք կանցնելին, շոգենաւնորոգ, թրամուէններու մէջ, ակումբներու մէջ Թայմզ կը կարդացուէր, Թայմզ կը թարգմանուէր: Պ. կատարելի խօսքերն «this most important Armenian question» — հայկական այս ամենակարեւոր խնդիրը մեծ տպաւորութիւն ըրին ամենուն վրայ: Այս անգամ կը տեսնենք որ պարզ խոստում մը կամ երկրորդական յայտարարութիւն մը չէ որ կըրէ: Պ. կատարելի եւրոպական տեղութեանց միարանութիւնը անհրաժեշտ կը համարի արեւելեան խնդրոյ լուծման համար, և այդ միարանութեան գոյութիւնը կը հարգուի: Հայկական հարցը արեւելեան խնդիրներու մէջ կարեւորագոյնը զիւր մը գրաւած ըլլալը յայտարարելովը պ. կատարելի յայտարարած ըլլալ թէ այդ հարցն ալ նոցա միարան համութեամբ կարգադրուի պիտի: Արդէն պ. Չառլս Տիւր առաջին նախաբարեն առաջ բացարձակ կերպով նմանօրինակ յայտարարութիւնը ըրած է: Յունիս 3-ին «Մշակի» գրած եմ թէ հոս տեղի տաճիկ թիւթիւններու ըստմին հակառակ են մեր ստացած տեղեկութիւններն, և թէ եւրոպական միարանութիւն

մը հաստատուած է շայտատանի բարեկարգութեան խնդրոյ համար: Անգղիոյ պաշտօնէից յայտարարութիւններն կը հաստատեն Կ. Պոլսի ազգի տեղեկութիւն ունեցող շրջանակներու մէջ տարածուած այս լուրը: սակայն սա ալ ըսած ենք և կըսենք թէ այդ միարանութիւնը եթէ սկզբունքին վրայ կատարուէր է, գործադրութեան ժամանակին համար համաժող չեն: Անգղիոյ նախարարներն իրենց յատուկ պատճառներն ունէին այս բանս չըսելու համար, սակայն մենք մեզմէ ծածուկ պահելու պէտք մը չունինք: Կը փափագենք որ Կ. Պոլսին այժմ բացակայ եղող մեծ տեղութեանց զեւպաններն մին մեր խնդրոյն համար նոք հրահանգներով դառնար ի Պոլսի: Այս առթիւ սա ըսենք որ Թայմզի մէջ հրատարակուած մէկ հեռագիրն, իբր թէ Ալեմանիա համաժող չէ որ այժմ հայկական բարեկարգութեան խնդիրը առաջ ընդունի: Կ. Պոլսի վ. ազգութի մէջ լուրն է որ ստոյգ ըլլալու երաշխաւորութիւն մը չընծայէ: Այն երկրից, որ Անգղիոյ խորհրդարանին մէջ ալ յունիս 24-ին յայտարարուած թէ՛ եթէ շայտատանի բարեկարգութեանց գործադրութիւնը ուշանայ՝ շայտատանի մէջ մեծամեծ չիտութիւններ կրնան ծագել, այդ երկրիցը եթէ մտքերու մէջ յառաջադիմութիւն ընէ այն ատեն շատ յոյսեր կրնանք ունենալ: շայտատանն և կլիկիկայն եկած տեղեկութիւնները կը հաստատեն թէ օրէ օր հայոց վիճակը կը դառնանայ և կառավարութեան խտրութիւնները կը սաստկանան: Մեր լրագրիները ոչինչ կրնան գրել անմիջապէս կը ջնջուին, թղթակցիներն ալ չեն կրնան թէ բոսթը կը բանայ: Այս պատճառով նամակներն քիչ կրգան, բայց վերջապէս կուգան և քիչով կը հասկնան:— Այս ա-

ռաւոտ նամակ մը ստացայ որ ի միջի այլոց սա լուրը կուտայ չանցեալ տարի սովի առնել կառավարութեան շտեմարաններն ցորեն բաժնուեցաւ կամ թէ փոխ տրուեցաւ զիւրացուց, այժմ տեղական իշխանութիւնը այդ ցորենները օրէ օր կը պահանջէ. ազգաւոր գիւղացիները ամբողջապէս տալու կարող չեն, ամեն տեսակ բռնութեան կենթարկուին: Սովու առնել ցորենը ինչ զին որ ունէր հիմայ այդ զինը կը պահանջէին: Մուշի Ս. Կանիէի վանքի գիւղերն մէկն 48 ոսկի կը պահանջէր տեղական իշխանութիւնը, երբ գիւղացիք անմիջապէս չը կրցան տալ, տեղական իշխանութիւնը շատերը բռնել տուաւ և շտեմարանի ազգութի ծեփիւ տալով ու կրակ վարել տալով մերկ օտքով զանոնք կը արկի վրայ կայնեցուց ու կամայ մաց կամաց սկսուաւ այրել տալ: Այս լուրին ստուգութեանը կատարելապէս կերտը խառնուած և եթէ օտար թիւթիւն մէջ ալ արտադրուի, և ի հարկին քննութիւն ալ ընելու ուղով, հաստատուելու պատրաստ են: Սովու օրեր փոխ տրուած պատառ մը հացի համար այսօր հայերը այրել: Եւ զեռ արդեօք ինչ խելքէ մտքէ չանցած ոճիւրներ կը գործուին շայտատանի ամեն անկիւնները և մենք ոչինչ կրնանք անք: Անգղիոյ խորհրդարանի երեսփոխաններն ատենք ամենք չեն զիտեր, բայց վերվերոյ գաղափար մը ունին և կենթարկին թէ համբերութիւն ալ չափ մը ունին: Կրդեօք չը պիտի գայ օր մը որ մտածենք թէ շտեմարանը կրակով այրել լաւագոյն է թէ արիւնի մէջ թաթախելով մեռնելը:— Յունիս 12/24-ի նշանաւոր նիստէն քանի մը օր վերջը լուր Տիֆլիսէն պատրիարքին այցելութեան եկաւ: Այս այցելութեան մասնաւոր կարեւորութիւն ընծայած ըլլալով առաւօտէն Թիւրքիայէն հեռագրով հարցը

գամ էր պատրիարքին: Պ. կոչելի օրով եղած խորհրդակցութիւնները, լուր Տիֆլիսի ընդունած նոր հրահանգներն, բարեկարգութեանց անհրաժեշտ սեպուած կէտերն այն տեսակցութիւնը գրաւած են:— Ինչ կը յուսայ պատրիարքը: Շատ յայտնի է որ Բ. Կուռը զիւր խաղցնելու, խաբելու քաղաքականութիւնն ամենին չեղել չուզէր, վերջի օրերս իսկ գրուած զանգափ գրերուն իսկ պատասխան մը չը տար: Պատրիարքը որ երկու ամիսներու համար իր հրատարականը ետ առած էր, յուսալով որ կառավարութիւնը քիչ մը կը սթափի, կը տեսնէ որ այս սթափումը տեղի պիտի չունենայ: Երէկ Ազգ. ժողովը գումարեցաւ. պատրիարքը յայտարարեց թէ քանի մը օրէն յունիս ամիսը կը վերջանայ, հետեւաբար ինքն յունիս 1-էն հրատարակ է, զայս ըսաւ և մեկնեցաւ: Ժողովը այս նիւթին վրայ բաւական վիճաբանութիւններ ըրաւ, փոքրամասնութիւն մը, որ պատրիարքի հրատարակելու կուզէր, խելացի կերպով չարժեցաւ, հասկացաւ թէ ազգի շահուցը հակառակ է այս հրատարակը, ազգային կարծիքը իրեն հետ մէկտեղ չը պիտի ըլլայ, ուստի իր գիտաւորութիւնէն ետ կեցաւ, յուսալով միանգամայն որ Ներսէս սրբազանը եթէ այս անգամ ալ մնայ, կարող պիտի ըլլայ աւելի զօրաւոր կերպով աշխատել: Ժողովը ըմբռնած է թէ շայտատանի բարեկարգութեան խնդիրը Ներսէս սրբազանի վրայ միայն չէ կայացած: Աստուած մի արարցէ, եթէ սրբազանը յանկարծ վախճանի, ինչպէս ժողովին մէջ զիտել տուաւ երեսփոխանին մէկը, արդեօք 61-րդ յօդուածը եւրոպական կառավարութեանց պիտի վերադարձնէր, ըսելով թէ այլևս զա պէտք չէ: Բայց միւս կամեան ժողովը նաև լաւ հասկացած է թէ քանի որ Ներսէս ողջ է, քանի որ կարող է